

Յառաւաւտունն, երբ կու բացուի,
Գոյնն է պայծառ եւ գովելի.

45 Նոր ձայն ածեմ քեզ սիրելի,
Սիրտ իմ սիրով քոյ ոչ յագի:

Շուռ արեկ ի բաղէս կանաչ,
Յիս մերձեցիր դու անամաչ.

50 Ուշիմ խոհեմ իմաստուն քաջ,
Առ իս մաւտեց, նըստիր ի յաջ:

Զքենաղ գունով ես միշտ ի վառ,
Դու ահաւոր ես ու անճառ.

Պատկերըն քոյ լուսանդկար,
Գըլուխ ծաղկանցն ես հաւասար:

55 Զուապ կու տայ ինքն յամէն դամ,
Յառաւաւտուն զփարդէս բանամ.

Ռահ սիրով բնդ քեզ կու գամ,
'Ի այլ ի քեզնէ ոչ հեռանամ:

60 Սարսեմ եւ ես ի քէն գողամ,
Երբ որ շարժիս նայ հիանամ.

Վերայ վարդիտ ուրախանամ,
Առնում ի գրախտըն վերանամ:

Տուր բզձայն քոյ ի գիշերիս,
Որ ծըրարեմ զքեզ ի յոգիս.

43. B. յառաւաւտուն: A. բացուի: — 44. A. գունն. B. գոյնդ: — 46. B. սիրտս... քո: — 47. B. շուրջ արեկ ի պաղէս կանանչ: — 49. B. 'ւ իմաստուն: — 50. B. նըստիմ: A. ի յաչ:

52. B. ու պայծառ: — 53. B. քո: A. լուսայնկար:

55. B. կու տա... ժամ: — 56. B. զկանանջ փերտէն յետ կու բանամ: — 57. B. հետ: — 60. B. նա: — 63. B. քո: